ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«10» Դեկտեմբերի 2020թ. N 71-Հ.

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N 180-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 13-րդ և 20-րդ ենթակետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմում թեժ գծի ստեղծման, կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 180-Ա հրամանը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2020 թվականի մարտի 10-ի
N 71 - Ա հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆ

29 փետրվարի 2012 թվականի N 180-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԺ ԳԾԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 14-ի թիվ 20 նիստի արձանագրության 33.1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի թիվ 29.6/102257-12 նիստի արձանագրության հանձնարարականի 2-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության թեժ գծի ստեղծման, կազմակերպման և գործունեության կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության թեժ գծի էլեկտրոնային գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարին՝

1) ապահովել թեժ գծի գործելու համար անհրաժեշտ աշխատանքային և տեխնիկական պայմանները.

2) սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում նշանակել յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից թեժ գծով ստացվող զանգերի և դիմում-բողոքների համար պատասխանատու անձանց.

3) ապահովել զանգվածային լրատվության միջոցներով հանրության իրազեկումը թեժ գծի ներդրման և դրա գործելու ընթացակարգերի մասին.

4) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակել՝

ա. յուրաքանչյուր ամիս թեժ գծով ստացված զանգերի և դիմում-բողոքների բնույթի, քանակի և դրանց առնչությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ տվյալները,

բ. թեժ գծի պատասխանատու անձանց անունը, ազգանունը, ստորաբաժանման անվանումը, պաշտոնը և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև թեժ գծի պաշտոնական էլեկտրոնային փոստը:

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱՋՅԱՆ

«Հավելված N 1
ՀՀ ֆինանսների նախարարի
2012 թվականի փետրվարի
29-ի N 180-Ա հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԺ ԳԾԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) թեժ գծով (այսուհետ՝ թեժ գիծ) ստացված ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների ու ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց՝ նախարարությանը վերապահված գործառույթներին առնչվող դիմում-բողոքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում քննարկելու, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և օրենքով պաշտպանվող շահերի խախտման փաստերին արձագանքելու առնչությամբ ծագող հարաբերությունները:

2. Սույն կարգի նպատակն է ապահովել դիմում-բողոքների քննարկման աշխատանքների արդյունավետության բարձրացումը և թափանցիկությունը:

3. Սույն կարգը չի տարածվում դատարանների վարույթում գտնվող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով լուծում ստացած հարցերի վերաբերյալ քաղաքացիների դիմում-բողոքների վրա:

4. Թեժ գծի բնականոն գործունեությունն ապահովում է քարտուղարության պետը:

5. Նախարարությունում թեժ գծով ստացված դիմում-բողոքների ընդունումն ու գրանցումը իրականացնում է քարտուղարության կողմից նշանակված պատասխանատու անձը:

6. Քարտուղարության կողմից նշանակված պատասխանատու անձը պետք է տիրապետի նախարարության յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից իրականացվող գործառույթներին և լիազորությունների շրջանակին:

7. Յուրաքանչյուր տարի՝ միչև հունվարի 20-ը, քարտուղարության կողմից շրջանառվում է շրջաբերական՝ թեժ գծի համար պատասխանատու անձանց ցուցակ տրամադրելու համար: Նախարարության ստորաբաժանումները պարտավոր են պատասխանատու անձանց տվյալները ներկայացնել մինչև հունվարի 27-ը: Յուրաքանչյուր

տարի՝ միչև հունվարի 30-ը, նախարարության գլխավոր քարտուղարը հաստատում է նախարարության յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից թեժ գծի համար պատասխանատու անձանց ցուցակը: Պատասխանատու անձի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման դեպքում պատասխանատու անձին ներկայացրած ստորաբաժանումը՝ ի դեմս ղեկավարի, պարտավոր է պատասխանատու անձի նոր թեկնածու ներկայացնել գլխավոր քարտուղարին՝ ազատված պատասխանատու անձի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

8. Սույն կարգի 7-րդ կետում նշված ցուցակն, անհրաժեշտության դեպքում կարող է փոփոխվել գլխավոր քարտուղարի հրամանով:

9. Քարտուղարության կողմից նշանակված պատասխանատու անձը՝

1) կատարում է թեժ գծով (հեռախոսակապի միջոցներով) ստացված դիմում-բողոքների ընդունումը և գրանցամատյանում գրանցումը.

2) թեժ գծի պաշտոնական էլեկտրոնային փոստով՝ «hotline@minfin.am»-ով ստացված դիմումների և դիմում-բողոքների ընթացքն ապահովվում է նախարարության գործավարության կարգի համապատասխան.

3) ճշտում է զանգահարողի անձնական տվյալները (անունը, ազգանունը, բնակության վայրը, հասցեն, հեռախոսահամարը).

4) ճշտում է բողոքի, գանգատի, դիմումի բնույթը.

5) ելնելով բողոքի, գանգատի, դիմումի բնույթից՝ կապ է հաստատում նախարարության համապատասխան ստորաբաժանման պատասխանատու նշանակված անձի հետ՝ անհրաժեշտ ընթացքն ապահովելու նպատակով.

6) հետադարձ կապի միջոցով ճշտում է տրված պատասխանի բավարար լինելը և գրանցամատյանում համապատասխան գրառում կատարում կատարված քայլերի վերաբերյալ.

7) առաջացած խնդիրներին լուծում տալու նպատակով համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ քննարկում պահանջող դիմում-բողոքների մասին գրանցամատյանում գրանցելուց հետո քարտուղարության պետի միջոցով գրավոր զեկուցում գլխավոր քարտուղարին՝ համապատասխան ընթացքն ապահովելու համար:

10. Քննարկում պահանջող դիմում-բողոքները, գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ, փոխանցվում են համապատասխան ստորաբաժանումների

ղեկավարներին, ինչպես նաև համակարգող պաշտոնատար անձին՝ դիմում-բողոքներում ներկայացված փաստերի ուսումնասիրություն իրականացնելու նպատակով:

11. Ուսումնասիրության արդյունքում բացահայտված խախտումներին վերաբերող նյութերը համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից գրավոր ներկայացվում են գլխավոր քարտուղարին, ինչպես նաև համակարգող պաշտոնատար անձին:

12. Բացահայտած խախտումների վերաբերյալ նյութերի մասին ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված բավարար պատասխանը գլխավոր քարտուղարը փոխանցում է քարտուղարության պետին՝ բողոք ներկայացնող անձին տեղեկացնելու համար:

13. Ստացված հեռախոսազանգերի, դիմում-բողոքների բնույթի, քանակի և դրանց առնչությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ ամփոփ տվյալները յուրաքանչյուր ամիս քարտուղարության աշխատողի կողմից ներկայացվում են քարտուղարության պետին՝ թեժ գծով ստացված հարցերին արձագանքման և սպառիչ պատասխանների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով:

14. Քարտուղարության պետը սույն կարգի 13-րդ կետում նշված տվյալները եռօրյա ժամկետում տրամադրում է նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին:

15. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետը, հավաստիանալով, որ տվյալների հրապարակումը չի հակասում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, 2 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում է տեղեկատվությունը նախարարության minfin.am պաշտոնական կայքում:

16. Թեժ գիծը գործում է աշխատանքային օրերին և ժամերին:

«Հավելված N 2
ՀՀ ֆինանսների նախարարի
2012 թվականի փետրվարի
29-ի N 180-Ա հրամանի

Հ/Հ	Հարցը թեժ գծին ներկայացնելու օրը, ժամը	Հարցը ներկայացնողի տվյալները	Հարցի համառոտ բովանդակությունը	Նշումներ	Թեժ գծով ստացվող զանգերի պատասխանատու
1	2	3	4	5	6
1					
2					
3					